9-10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ
3-միավորանոց առաջադրանքներ

1. Ըստ ժողովրդական ասացվածքի՝ ի՞նչ չի կարելի անել անգետի հետ:

Ա)փլավ ուտել
Բ)գործ բռնել
Գ)դաս սովորել
Դ)վիճել

2. Պատասխանի տարբերակներից երեքը «բարեկամներ» են, իսկ մեկը նրանց հյուր է եկել: Ո՞րն է հյուրը:

Ա) լավագույն
Բ) մեծագույն
Գ) շառագույն
Դ) վեհագույն

3. Պատասխանի տարբերակներից ո՞րը կամբողջացնի ասացվածքը:

<< Թռչունի հունարն իր ---------- մեջ է:>>

Ա) ոտքի
Բ) թևի
Գ) կտուցի
Դ) փետուրի

4. Հայերենի կետադրության բոլոր կանոններով գրված տեքստում կետադրական նշանների ո՞ր համադրությունը չի կարող հանդիպել:

Ա))՝
Բ) :(
Գ) :)
Դ)),

5. Այդ տառն ավելացնելով **ԱՅ** բառի սկզբից՝ կստանանք նոր բառ: Նույն տառն ավելացնելով **ԱՅ** բառի վերջից՝ կստանանք ուրիշ նոր բառ: Ո՞ր տառն է դա:

Ա)հ
Բ)ո
Գ)բ
Դ)ծ

6. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը.

քաղաք, զբոսանք, օգնություն, գդալ, սենյակ,

Վերարտադրումը միայն "Քոնթեստ Լաբ"-ի թույլտվության

Ա) դպրոց
Բ) վզնոց
Գ) լուսին
Դ) հանգիստ

7. Վարդանը գրքից դուրս է գրել նավերին վերաբերող բառեր: Ո՞ր դեպքում է նա սխալվել:

Ա) կցանավ
Բ) նավախել
Գ) նավակատիք
Դ) բեռնանավ

8.
Ամրամը ամրացրեց ամրանը,
Սպարտակը հավաքեց սպասքը,
Կարենը կարողացավ կարգադրել,
իսկ Լուսիկը լուսամուտից ի՞նչ արեց:

Ա) լուսանկարեց
Բ) լվացք փռեց
Գ) ներս մտավ
Դ) դուրս նայեց

9. Ո՞ր բառով հնարավոր չէ հաշվել:

Ա) զույգ
Բ) երրորդ
Գ) չորսու
Դ) հնգյակ

10. Բերված նախադասության մեջ քանի՞ հատ յ տառ պետք է տեղադրվի գծիկների փոխարեն:
<< ***Թա-լանդ ժամանած ուկրա-ինացիները գիտե-ին կորե-երեն:*** >>

Ա) 1
Բ) 2
Գ) 3
Դ) ոչ մի

Էլեկտրոնային տարբերակը միայն "Քոնթեստս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

4-միավորանոց առաջադրանքներ

11. Տարբերակների բառերից որի՞ց է հնարավոր ստանալ բարդ բառ, որը նշանակում է դրամական պարգևատրում:

Ա) կաթ
Բ) լիմոնադ
Գ) թեյ
Դ) սուրճ

12. ***Կ<u>ուտ</u>, պա<u>տան</u>, պ<u>ատ</u>, բ<u>ուն</u>, մ<u>ութ</u>, ս<u>ալ</u>, ա<u>ծան</u>, հնչ<u>ուն</u>, հ<u>աց</u>*** բառերից քանիսո՞ւմ ընդգծված տառերի միջև ***յ*** տառը տեղադրելիս նոր բառ չի ստացվի:

Ա) մեկում
Բ) երկուսում
Գ) երեքում
Դ) բոլոր դեպքերում էլ կստացվի նոր բառ

13. Բերված նախադասության մեջ քանի՞ բառում ուղղագրական սխալ կա:

Այսօր հին աշխարհի յոթ հրաշալիքներից պահպանվել են միայն Եգիպտական բուրգերը, որոնք իրենց պատերազմական մաշտաբներով ափշեցնում են յուրաքանչյուր բանական էյակի:

Ա) 5
Բ) 4
Գ) 7
Դ) 6

14. ***Գոյական, բայ, ենթակա, ածական*** բառերից ո՞րն է, ամենայն հավանականությամբ, սխալմամբ հայտնվել այս շարքում:

Ա) գոյական
Բ) բայ
Գ) ենթական
Դ) ածական

15. Ի՞նչ է գաղտնագրվել տառաշարքում:

Այբսեայբվովեվէըթնուկենեչրեդաայբսեեչմենվովեվեչսեդաու:

Ա) Ասա՝ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու:
Բ)Այս առավոտ երկար մտածեցի:
Գ)Այստեղ կենդանիներ կան:
Դ)Այսպես է ասում մի մարդու:

Վերարտադրումը միայն "Քոմփյութերս Լայֆ"-ի թույլտվությամբ

16. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա) Բազեն կուշտ է:
Բ) Բզեզը տկար է:
Գ) Բենզինը թանկ է:
Դ) Բիզը երկար է:

17. Աբելը, Դավիթը, Վարդանը և Գագիկը սովորում են նույն դասարանում: Տղաներից մեկի անունը ինչ-որ հատկությամբ տարբերվում է մյուսներից: Ո՞վ է նա:

Ա) Տիգրան
Բ) Դավիթ
Գ) Վարդան
Դ) Գագիկ

18. ***Գայ, խայ, ճայ, պայ, նայ*** տառախմբերն ուզեցին դիպչել -ին: Ո՞րը չկարողացավ:

Ա) գայ
Բ) ճայ
Գ) պայ
Դ)նայ

19. Մարին բերված նախադասության մեջ բառագործածական քանի՞ սխալ էր թույլ տվել:

Այգաբացից արքունի գինարբուկին մասնակցելու իրավերք էին ստացել իրենց հանցանքի համար մեղանչած արջառները:

Ա) 1
Բ) 2
Գ) 3
Դ) 4

20. Պարույր Սևակի հայտնի բանաստեղծության բերված հատվածում պատասխանի տարբերակներից ո՞րն իր «զույգը» չունի:

Ձուլալ ջրերդ նման են խղճիդ)
Քեզ քաջ են կոչել, կոչել են տկար,
Բայց ոչ...) Տիրակալ:
Մերթ՝ օրինապահ, մերթ՝ փորագրիչ,
Միշտ՝ տաղանդավոր...)

Ա) հստակ
Բ) ըմբոստ
Գ) գութ
Դ) հանճարեղ

Վերջնական արդյունքների էքսպերտիզա Լոբ-ի թույլտվությամբ

5-միավորանոց առաջադրանքներ

21. Շարքում բառերը դասավորված են այբբենական կարգով: Բացի այդ՝ դրանք կապված են որոշակի օրինաչափությամբ: Ըստ այդ օրինաչափության՝ ո՞րը կլինի հաջորդ բառը:

<< Գունդ, ծաղիկ, ոչինչ, վճիտ, ... >>

Ա) տաղավար
Բ) ցանկապատ
Գ) փրփուր
Դ) քնար

22. Պատասխանի տարբերակներից մեկը «թաքնվել է» բերված նախադասության մեջ: Ո՞րն է այդ բառը:

<< Արտաշատցի մաթեմատիկոսը վերադարձավ նիհարած: >>

Ա) արմավենի
Բ) Տաթևիկ
Գ) տատիկ
Դ) նամականի

23. Ինչի՞ անվանում է գաղտնագրվել նկարելուկով:

Ա) կենդանու
Բ) կահույքի մասի
Գ) փոխադրամիջոցի
Դ) ծաղկի

24. Ամսանունները շարվեցին այբբենական կարգով: Նրանցից քանի՞սը տեղից շարժվեցին:

Ա) բոլորը
Բ) մեկը
Գ) երկուսը
Դ) երեքը

25. Ըստ օրինաչափության՝ պատասխանի տարբերակներից ո՞րը կլինի հաջորդ բառը:

« Կարգ, գրամ, մանուշակ, կախարդական, _____ »

Ա) նամակ
Բ) նամակագիր
Գ) նամակատար
Դ) նախադասություն

Վերոնշյալը միայն "Քոնդեսաս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

26. Պատասխանի տարբերակների բառազույգերից ընտրիր և տեղադրիր երկու բաց թողնված բառերն այնպես, որ կարդացվի ճիշտ պնդում.
«Այս նախադասության մեջ ը տառը հանդիպում է _____ անգամ, իսկ ե տառը՝ _____ անգամ»:

Ա) երեք, երկու
Բ) չորս, երեք
Գ) երկու, մեկ
Դ) երեք, չորս

27. Բերված բառազույգերից երեքը փոխադարձաբար «կապված են» մի շատ հետաքրքիր օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներից ո՞րը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա) տաղ-շող
Բ) հոր-սազ
Գ) բառ-սեր
Դ) հին-կոր

28. Ինչի՞ մասին է գրաբարով գրված միջնադարյան այս հանելուկը.

Զանունն աղեղ ասեն ի գրոց,
Բայց ինքն վառի որպէս զբոց,
Անճառ փայլուն առնէ գունոց
Եւ հաշտութեան նշան՝ ամպոց:

Ա) ծիածան
Բ) անձրև
Գ) կամար
Դ) խարույկ

29. Չինական գրում նշանների եռապատկումը սկզբնապես օգտագործվել է նոր իմաստով բառեր արտահայտելու համար: Օրինակ՝
木 ծառ - 森 անտառ, 人 մարդ - 众 ամբոխ, 風 քամի - 颿 փոթորիկ: Գտե՛ք 磊, 鑫, 鼎 հիերոգլիֆների թարգմանությունները, եթե հայտնի է, որ 石-ը քար է, 隹-ը՝ թռչուն, 鼎-ը՝ ձի:
Ա) պարկեշտ, բույն, տափաստան
Բ) խիճ, հավկիթ, վազք
Գ) քարակույտ, երամ, երամակ
Դ) ժայռ, ճախրանք, ազատություն

30) Թվանշանները շարվել են որոշակի հերթականությամբ: Պատասխանի տարբերակների թվանշաններից ո՞րը պետք է շարքում հաջորդը լինի:
<< 3, 2, 9, 5, 1, ... >>
Ա)7
Բ)4
Գ)6
Դ)8

Պետությունը միայն "Քոնթեստս ԷԱՔ"-ի թույլտվությամբ